Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-964-20.11.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գաղտնիքի մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-49-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 2-րդ մասում «դրանց առնչվելու համապատասխան թույլտվություն:» բառերից հետո լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, իրավաբանական անձինք կարող են պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները փոխանցել միայն այն կազմակերպություններին եւ իրավաբանական անձանց, որոնք գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունքը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ դրանց առնչվելու համապատասխան թույլտվությունն ստացել են սույն մասով սահմանված ընդհանուր կարգով, իսկ Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող եւ վերջինիս կողմից տրված գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունք ունեցող իրավաբանական անձինք ու Արտաքին հետախուզության ծառայության կողմից տրված պետական գաղտնիքին առնչվելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձինք պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին կարող են առնչվել միայն Արտաքին հետախուզության ծառայության հետ հարաբերություններում:»

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացնել նոր՝ 2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Արտաքին հետախուզության ծառայությունում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաեւ Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող ֆիզիկական անձանց պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն տրամադրվում է, իսկ իրավաբանական անձանց գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունք տրվում է Արտաքին հետախուզության ծառայության կողմից ընդհանուր կարգով, որի դեպքում համապատասխան ստուգողական միջոցառումները (այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումները)

իրականացնում է Արտաքին հետախուզության ծառայությունը՝ համագործակցելով լիազոր մարմնի հետ:

2.2. Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց Արտաքին հետախուզության ծառայության կողմից ստացված պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվությունը կամ գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու թույտվությունը կիրառելի է միայն Արտաքին հետախուզության ծառայությունում աշխատանքի կամ վերջինիս հետ համագործակցության շրջանակում պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու համար:

2.3. Արտաքին հետախուզության ծառայության եւ լիազոր մարմնի՝ ֆիզիկական անձանց պետական գաղտնիքին առնչվելու թույլտվության եւ իրավաբանական անձանց գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունքի տրամադրման շրջանակներում համագործակցության կարգն ու պայմանները սահմանում է Վարչապետը:»

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասում «լիազոր մարմնի համաձայնությամբ» բառերից հետո լրացնել հետեւյալ բառերը.

«, բացառությամբ Արտաքին հետախուզության ծառայության կողմից անձանց տրվող թույլտվության, որը տրամադրվում է Արտաքին հետախուզության ծառայության կողմից, առանց լիազոր մարմնի համաձայնության»:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդավծի 2-րդ մասի 4-րդ կետում «լիազոր մարմնի գնահատմամբ» բառերից հետո լրացնել հետեւյալ բառերը.

«իսկ արտաքին հետախուզության ծառայության կողմից տրամադրվող թույտվության դեպքում՝ արտաքին հետախուզության ծառայության գնահատմամբ»:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Արտաքին հետախուզության ծառայությունում միջգերատեսչական վերահսկողության շրջանակում ստուգվում են գաղտնիության ռեժիմի պահպանման տեխնիկական հագեցվածության եւ կահավորվածության պայմանները, իսկ միջգերատեսչական վերահսկողության շրջանակում ստուգման ենթակա մյուս հարցերը՝ Արտաքին հետախուզության ծառայության պետի հետ նախապես համաձայնեցված դեպքերում եւ ծավալներով»:

Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածում լրացնել նոր 9.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«9.1. Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող եւ միայն վերջինիս կողմից տրված՝ գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունք ստացած իրավաբանական անձանց մոտ միջգերատեսչական

վերահսկողությունը իրականացնում է Արտաքին հետախուզության ծառայությունը: Արտաքին հետախուզության ծառայության կողմից սույն մասով սահմանված միջգերատեսչական վերահսկողությունն իրականացվում է սույն հոդվածով սահմանված կարգով եւ լիազորություններով»:

Հոդված 7. Օրեքի 26-րդ հոդվածի 1-ին մասում «լիազոր մարմին դիմելու համար» բառերից հետո լրացնել հետեւյալ բառերը.

«բացառությամբ Արտաքին հետախուզության ծառայությունում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, ովքեր պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն ստանում են Արտաքին հետախուզության ծառայությունից»:

Հոդված 8. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ Արտաքին հետախուզության ծառայության եւ լիազոր մարմնի համագործակցության կարգն ու պայմանները սահմանվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ-964-20.11.2024-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ~~ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գաղտնիքի մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-49-Ն օրենքի (այսուհետ՝ Օ~~ր~~ենք)- 16-րդ հոդվածի 2-րդ մասում «դրանց առնչվելու համապատասխան թույլտվություն:» բառերից հետո լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, իրավաբանական անձինք կարող են պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները փոխանցել միայն այն կազմակերպություններին եւ իրավաբանական անձանց, որոնք գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունքը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ դրանց առնչվելու համապատասխան թույլտվությունն ստացել են սույն մասով սահմանված ընդհանուր կարգով, իսկ Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող եւ վերջինիս կողմից տրված գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունք ունեցող իրավաբանական անձինք ու Արտաքին հետախուզության ծառայության կողմից տրված պետական գաղտնիքին առնչվելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձինք պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին կարող են առնչվել միայն Արտաքին հետախուզության ծառայության հետ հարաբերություններում:»

Հոդված 2 . Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացնել նոր՝ 2.1 ին, 2 2 րդ և 2 3 րդ մասերը հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Արտաքին հետախուզության ծառայությունում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաեւ Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող ֆիզիկական անձանց պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն տրամադրվում է, իսկ իրավաբանական անձանց գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունք տրվում է Արտաքին հետախուզության ծառայության կողմից ընդհանուր կարգով, որի դեպքում համապատասխան ստուգողական միջոցառումները (այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումները) իրականացնում է Արտաքին հետախուզության ծառայությունը՝ համագործակցելով լիազոր մարմնի հետ:

2.2. Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց Արտաքին հետախուզության ծառայության կողմից ստացված պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվությունը կամ գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու թույտվությունը կիրառելի է միայն Արտաքին հետախուզության ծառայությունում աշխատանքի կամ վերջինիս հետ համագործակցության շրջանակում պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու համար:

2.3. Արտաքին հետախուզության ծառայության եւ լիազոր մարմնի՝ ֆիզիկական անձանց պետական գաղտնիքին առնչվելու թույլտվության եւ իրավաբանական անձանց գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունքի տրամադրման շրջանակներում համագործակցության կարգն ու պայմանները սահմանում է Վարչապետը:»

Հոդված 32. Օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասում «լիազոր մարմնի համաձայնությամբ» բառերից հետո լրացնել հետեւյալ բառերը.

«, բացառությամբ Արտաքին հետախուզության ծառայության կողմից անձանց տրվող թույլտվության, որը տրամադրվում է Արտաքին հետախուզության ծառայության կողմից, առանց լիազոր մարմնի համաձայնության»:

Հոդված 43. Օրենքի 21-րդ հոդավծի 2-րդ մասի 4-րդ կետում «լիազոր մարմնի գնահատմամբ» բառերից հետո լրացնել հետեւյալ բառերը.

«իսկ արտաքին հետախուզության ծառայության կողմից տրամադրվող թույտվության դեպքում՝ արտաքին հետախուզության ծառայության գնահատմամբ»:

Հոդված 54. Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Արտաքին հետախուզության ծառայությունում միջգերատեսչական վերահսկողության շրջանակում ստուգվում են գաղտնիության ռեժիմի պահպանման տեխնիկական հագեցվածության եւ կահավորվածության պայմանները, իսկ միջգերատեսչական վերահսկողության շրջանակում ստուգման ենթակա մյուս հարցերը՝ Արտաքին հետախուզության ծառայության պետի հետ նախապես համաձայնեցված դեպքերում եւ ծավալներով»:

Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածում լրացնել նոր 9.1 մաս հետեւյալ բովանդակությամբ.

«9.1. Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող եւ միայն վերջինիս կողմից տրված՝ գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունք ստացած իրավաբանական անձանց մոտ միջգերատեսչական վերահսկողությունը իրականացնում է Արտաքին հետախուզության ծառայությունը: Արտաքին հետախուզության ծառայության կողմից սույն մասով սահմանված միջգերատեսչական վերահսկողությունն իրականացվում է սույն հոդվածով սահմանված կարգով եւ լիազորություններով:

Հոդված 75. Օրեքի 26-րդ հոդվածի 1-ին մասում «լիազոր մարմին դիմելու համար» բառերից հետո լրացնել հետեւյալ բառերը.

«բացառությամբ Արտաքին հետախուզության ծառայությունում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, ովքեր պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն ստանում են Արտաքին հետախուզության ծառայությունից»:

~~***Հոդված 6.*** Օրենքի 24-րդ հոդվածում լրացնել նոր 9.1 մաս հետեւյալ բովանդակությամբ.~~

~~«Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող եւ միայն վերջինիս կողմից տրված՝ գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունք ստացած իրավաբանական անձանց մոտ միջգերատեսչական վերահսկողությունը իրականացնում է Արտաքին հետախուզության ծառայությունը: Արտաքին հետախուզության ծառայության կողմից սույն մասով սահմանված միջգերատեսչական վերահսկողությունն իրականացվում է սույն հոդվածով սահմանված կարգով եւ լիազորություններով:~~

~~*Հոդված 7.* Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում «դրանց առնչվելու համապատասխան թույլտվություն:» բառերից հետո լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.~~

~~«Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, իրավաբանական անձինք կարող են պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները փոխանցել միայն այն կազմակերպություններին եւ իրավաբանական անձանց, որոնք գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունքը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ դրանց առնչվելու համապատասխան թույլտվություն ստացել են սույն մասով սահմանված ընդհանուր կարգով, իսկ Արտաքին հետախուզության ծառայության հետ համագործակցող եւ վերջինիս կողմից տրված գաղտնի տեղեկությունների կիրառմամբ աշխատանքներ կատարելու իրավունք ունեցող իրավաբանական անձինք ու Արտաքին հետախուզության ծառայության կողմից տրված պետական գաղտնիքին առնչվելու թույլտվություն ունեցող ֆիզիկական անձինք պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին կարող են առնչվել միայն Արտաքին հետախուզության ծառայության հետ հարաբերություններում:»~~

Հոդված 8. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2 [illegible] ~~1-ին~~ հոդվածով սահմանված՝ Արտաքին հետախուզության ծառայության եւ լիազոր մարմնի համագործակցության կարգն ու պայմանները սահմանվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-964-20.11.2024-ՊԻ-011/1*) ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	Նախագծի վերնագիր	Առաջարկում ենք Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ» ձևակերպումը հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծով կատարվում են միայն լրացումներ: Սույն առաջարկությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթից, որի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	1-ին հոդված	**1.** «(այսուհետ՝ օրենք)» ձևակերպման մեջ «օրենք» բառը նշել մեծատառով: **2.** 7-րդ հոդվածով նախատեսված լրացումն առաջարկում ենք նախատեսել որպես 1-ին հոդված՝ պահպանելով հոդվածներում կատարվող լրացումների հերթական	Ընդունվել է: Ընդունվել է:	Ընդունվել է: Ընդունվել է:

			հաջորդականությունը: Նույն դիտարկումը վերաբերում է նաև նախագծի 5-րդ և 6-րդ հոդվածներին: Հաշվի առնելով վերագրյալը հոդվածների հաջորդականությունը վերանայվել է:		
3.	**Կառավարություն**	1-ին (խմբագրված 2-րդ) հոդված	Առաջարկում ենք՝ 1. «20-րդ հադվածի» բառերից առաջ լրացնել «Օրենքի» բառը: 2. «2.1 մասը» ձևակերպումը փոխարինել «2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ մասերը» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծով «Պետական գաղտնիքի մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) լրացվում են՝ «2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ» մասեր: Միաժամանակ առաջարկվում է Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացվող նոր՝ 2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ մասերի համարակալումը տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը:	Ընդունվել է	Ընդունվել է:
4"	**Կառավարություն**	**6-րդ հոդված**	Առաջարկվում է «9.1» գրելաձևը փոխարինել «9.1-ին» գրելաձևով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձևը: Միաժամանակ 6-րդ հոդվածով լրացվող նոր՝ «9.1» մասի տեքստից առաջ նշել՝ «9.1.» մասի համարը:	Ընդունվել է	Ընդունվել է:
5.	**Կառավարություն**	**8-րդ հոդված**	Հաշվի առնելով օրենքի նախագծի	Ընդունվել է	Ընդունվել է:

			հոդվածների հերթականության փոփոխությունը 8-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «1-ին հոդվածով» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել «2-րդ հոդվածով» բառերը		